ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԹ/1-033/458

Ք.Երևան 30 նոյեմբեր 2022թ.

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրեն Ն. Սահակյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից (Կատարողը և Պատվիրատուն միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված գումարի դիմաց Պատվիրատուին է մատուցում հետևյալ ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ)՝

1.1.1.Պատվիրատուն իրավունք է ստանում օգտվել "Հրատապ խորհրդատվության" ծառայությունից: Կադրային գործավարության և կադրային հաշվապահության վերաբերյալ Պատվիրատուի հարցերին պատասխան է տրվում մասնագետի կողմից անմիջապես:

1.1.2.Խորհրդատվության տրամադրում հեռակապի տարբեր միջոցներով (mail, ինտերնետ, հեռախոս, նամակագրություն և այլն):

1.1.3.Աշխատանքային և հարկային օրենսդրության ոլորտներում նոր ընդունված իրավական ակտերի տրամադրում, այլ իրավական ակտերի հետ փոխկապակցվածությունների բացահայտում և պարզաբանումներ:

1.1.4 Մեկ անձի մասնակցություն յուրաքանչյուր ամիս կազմակերպվող մեկօրյա թեմատիկ սեմինարներին:

2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողն իրավունք ունի՝

2.1.1.Պահանջել Պատվիրատուից վճարելու սույն պայմանագրով ձևավորված գումարը տասնօրյա ժամկետում:

2.1.2.Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը:

2.2.Կատարողը պարտավոր է՝

2.2.1. Մատուցել սույն պայմանագրի սահմանված Ծառայությունները բարձր որակով:

2.3.Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1.Պահանջել իրեն հանձնել սույն պայմանագրի պայմաններին համապատասխանող Ծառայություններ:

2.3.2.Սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը:

2.4.Պատվիրատուն պարտավոր է՝

2.4.1.Կատարողին վճարել սույն պայմանագրի 3-րդ բաժնում նշված կարգով վճարման ենթակա գումարը:

2.4.2.Ստորագրել, կնքել և մեկ ամսվա ընթացքում հետ վերադարձնել սույն պայմանագրից բխող փաստաթղթերը՝ սույն պայմանագիրը, հաշիվ-ապրանքագրերը, ակտերը և այլն:

2.4.3.Խելամիտ ժամկետում Կատարողին տեղեկացնել Պատվիրատուի իրավաբանական տվյալների փոփոխության մասին (հասցեափոխություն, անվանափոխություն, էլեկտրոնային հասցեի փոփոխություն և այլն):

3.Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները

3.1.Սույն պայմանագրի 1-ին բաժնում նշված Ծառայություններից օգտվելու գինը յուրաքանչյուր ամսվա համար կազմում է 12.000 (տասներկու հազար) ՀՀ դրամ, որը համապատասխանաբար սկսվում է 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը: Գինը ներառում է Կատարողի կողմից հաշվարկված, վճարված հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

3.2.Վճարման կարգը՝

Վճարման ձևը	Վճարման ժամանակացույցը	Նշել (√)
Կանխավճարային	Վճարումը կատարվում է սույն պայմանագրի շրջանակներում դուրս գրված փոխանցման-հաշվի՝ մեկ տարվա հաշվարկով:	
Հետվճարային	Վճարումը կատարվում է համաձայն դուրս գրված հաշվարկային փաստաթղթի՝ 10 (տասը) աշխատանքային օրերի ընթացքում:	√

4.Պայմանագրի վաղաժամկետ լուծման կարգը

4.1.Կատարողի նախաձեռնությամբ սույն պայմանագիրը կարող է լուծվել հետևյալ կարգով՝

4.1.1.Կատարողը սույն պայմանագրի լուծման մասին գրավոր դիմում է ներկայացվում Պատվիրատուին՝ պահանջելով կատարել սույն պայմանագրի 2.4-րդ կետում նշված պարտավորությունները և/կամ շտկել թույլ տրված խախտումները:

4.1.2.Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1.1-րդ կետում նշված դիմումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրերի ընթացքում չի կատարում և/կամ չի շտկում դիմումով ներկայացված պահանջները, ապա Կատարողն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը:

4.2.Պատվիրատուի նախաձեռնությամբ սույն պայմանագիրը կարող է լուծվել հետևյալ կարգով՝

4.2.1.Պատվիրատուն սույն պայմանագրի լուծման մասին գրավոր դիմում է ներկայացնում Կատարողի իրավաբանական հասցեներին՝ նշելով սույն պայմանագրի լուծման հիմքը:

4.2.2.Կատարողի կողմից Պատվիրատուի դիմումի հիման վրա կսկսվի սույն պայմանագրի լուծման գործընթացը՝ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4-րդ կետում նշված պարտավորությունները կատարված լինելու դեպքում:

4.2.3.Դիմումի համաձայն կպատրաստվի սույն պայմանագրի լուծման մասին համաձայնագիր:

4.2.4.Համաձայնագիրն երկկողմանի ստորագրման պահից սույն պայմանագիրը կհամարվի լուծված:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1.Բոլոր վեճերը և տարաձայնությունները, որոնք ծագում են սույն պայմանագրից կամ դրա խախտման, դադարեցման կամ անվավերության հետ կապված, պետք է լուծվեն բանակցությունների միջոցով: Եթե ցանկացած պատճառով անհնար է լուծել վեճերը բանակցությունների միջոցով, վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2.Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և/կամ լրացում կատարվում է համաձայնագրի միջոցով, որը վավեր է պայմանով, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի համաձայնագրերը դրա անբաժանելի մասն են:

5.3.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն պայմանագրի մեկական օրինակ:

5.5.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով՝ մինչև Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ սույն պայմանագրի 4-րդ բաժնում սահմանված կարգով սույն պայմանագրի լուծումը:

5.6.Պատվիրատուի կողմից պայմանագրի 3-րդ գլխով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.5(զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ազատամարտիկների պուրակ 1 ՀՎՀՀ՝ 06909818 Բանկ՝ ՀՀ Ֆ/Ն գործառնական վարչություն Հ/Հ՝ 900238000534 Տնօրեն՝ Digitally signed by SAHAKYAN Ն. Սահակյան Կ.Տ.	**«Մաստեր Սթայլ» ՍՊԸ** Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք ՀՎՀՀ՝ 01571846 Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ՝ 163008180909 Տնօրեն՝ SARGSYAN ARTUR 3206600014 Digitally signed by SARGSYAN ARTUR 3206600014 DN: c=AM, sn=, givenName=, serialNumber=e4a0e82c8df2, cn=SARGSYAN ARTUR 3206600014 Date: 2025.11.21 12:43:33 +04'00' Ա. Սարգսյան Կ.Տ.